# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

---

## ՈՐՈՇՈՒՄ N 64-Ա
## 27 ՄԱՅԻՍ 2021Թ
## ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասով, և հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հետ կնքված 2016 թվականի մայիսի 30-ի N299 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «ա» ենթակետը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. 2021 թվականի մայիսի 31-ից «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ստեփան Ստեփանյանին ազատել զբաղեցրած պաշտոնից, լուծել նրա հետ կնքած 2016 թվականի մայիսի 30-ի N299 աշխատանքային պայմանագիրը:
2. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություններին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հանձնման- ընդունման աշխատանքները:

5/27/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ